



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

25 հուլիսի 2019թ. թիվ 481-Ա

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՃՈՃԿԱՆԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆԱԿՈՉՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ 2002 ԹՎԱԿԱՆԻ
ՆՈՅՆԵՄԲԵՐԻ 13-Ի ԹԻՎ 189-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 11-րդ մասի 3-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2002թ. հուլիսի 25-ի թիվ 1392-Ն որոշման 6-րդ կետը, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարի առաջին տեղակալ Վ.Տերտերյանի 14.11.2011թ. թիվ 03/15/7259-11 գրությունը, «ՀՀ Լոռու մարզի Ճոճկանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի կառավարման խորհրդի 10.04.2019թ., ծնողական խորհրդի 24.05.2019թ. և մանկավարժական խորհրդի 27.05.2019թ. նիստերի արձանագրությունները՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ էՄ.

1. «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ճոճկանի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունն անվանակոչել Գոռ Խոտիկյանի անունով:

2. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի 2002թ. նոյեմբերի 13-ի թիվ 189-Ա որոշման թիվ 71 հավելվածով հաստատված կանոնադրության մեջ «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ճոճկանի միջնակարգ դպրոց» բառերը փոխարինել «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ճոճկանի Գոռ Խոտիկյանի անվան միջնակարգ դպրոց» բառերով:


3. Հաստատել կանոնադրության փոփոխությունը:

4. «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ճոճկանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրեն Գ. Խաչատրյանին՝

«Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ճոճկանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի կանոնադրության փոփոխությունը ներկայացնել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալություն՝ սահմանված կարգով պետական գրանցում իրականացնելու նպատակով:

ՀՀ ԼՈՌԻ ՄԱՐԶՊԵՏ

29/07/19

X 
ՍՄՆՆՆՆՆՆՆՆ

Ա.ՂՈՒԿԱՍՅԱՆ

2019թ. հուլիսի 25
ք.Վանաձոր